Վարչության պետը

1. Ապահովում է ՀՀ Վայոցձորի մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրագործումը,
2. Ապահովում է մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների գործունեության աջակցությունը.
3. Ապահովում է հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացումը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան.
4. Ապահովում է նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի, կրթական ծրագրերի իրականացումը.
5. Ապահովում է հանրապետական օլիմպիադայի դպրոցական, տարածքային և մարզային փուլերի անցկացումը և Մարզի մասնակցությունը օլիմպիադայի հանրապետական փուլին.
6. Կազմակերպում է Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտներին դասագրքերով ապահովելու գործընթացը.
7. Ապահովում է Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ձևավորման աշխատանքները.
8. Ապահովում է մարզպետի աշխատակազմի ենթակայության մշակութային հաստատությունների աշխատանքը, մարզային մշակութային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումների իրականացման աշխատանքները.
9. Ապահովում է Մարզի տարածքում ոչ պետական մշակութային և սպորտային կազմակերպությունների հետ համագործակցությունը.
10. Ապահովում է պետական մշակութային քաղաքականության իրագործումը Մարզում, Մարզի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության և օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը.
11. Ապահովում է մանկապատանեկան սպորտի զարգացման ծրագրերի, ֆիզկուլտուրային-առողջարարական և տարբեր մարզաձևերի մարզային միջոցառումների անցկացումը:
12. Ապահովում է մանկապատանեկան սպորտի բնագավառում պետական իրավասու մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների համատեղ և համաձայնեցված գործունեությունը.
13. Կազմակերպում է «Հեռավոր բարձր լեռնային և սահմանամերձ գյուղերի դպրոցներին ուսուցիչներով ապահովում» ծրագրի շրջանակներում Մարզ գործուղված ուսուցիչներին աշխատանքով ապահովման աշխատանքները.
14. Ապահովում է Մարզի ուսումնական հաստատություններում «Ռազմագիտություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրության դաստիարակության աշխատանքները.
15. Ապահովում է Վարչությանը վերապահված լիազորությունների շրջանակներում Մարզի տարածքում մարզային համապատասխան ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների

վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները.

16. **Ապահովում է Մարզի քաղաքացիական պաշտպանության բնագավառում Վարչությանը վերապահված գործառույթների իրականացումը.**